

Երկրորդ զանգ

1. ԼՍԵԼԻ ԱՐԱ ԻՆՁ, ՏԷՐ, ՋՅՆԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ²², ԵՒ ՅՆՁ[ԱՍՅԵՆ]²³ ՈՍԿԵՐՔ ԻՄ ՏԿԱՐ²⁴, ԳԹԱ ՔՍ ԱԱԾ Ի ՏԷՐ ՍՏ[Ե]Փ[ԱՆՈՍ]²⁵,

2. ՉԾԳ²⁶, ԱՅՍ ՏԷՐ ՍՏ[Ե]Փ[ԱՆՈՍ] ՕՐՊԷԼԵԱՆ ՄԵԾԱԻ ԶԱՆԻԻ ՈՒՂԱՓԱՌ ՊԱՀԵԼ²⁷ ԶԱԻԱՆԴՍ ՅԷԿԵՂԵՅԻՍ ՀԱՅՈՅ²⁸,

3. ՏԷՐ ՍՏ[Ե]Փ[ԱՆՈՍ] ՄԵՏՐԱՊՈԼԻՏ ՍԻՒՆԵԱՅ, ՈՐ Է ՊՐՏՏՈՅՐԱԻՆՏԷՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ:

Երկու զանգերի առաջին արձանագրությունները վերցված են Սաղմոսից (Մ, 10), սակայն խմբագրված են ազատ կերպով (Սաղմոսում՝ «Լսելի արա ինձ զցնծութիւն եւ զուրախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք»):

Արձանագրությունները խիստ հետաքրքիր են տառաձևերի, պատվո նշանների նոր ձևերի, փակագծերի ու հապավումների օգտագործման առումով: Նրանք նոր նյութեր են բնօրինակում Ստ. Օրբելյանի կենսագրության որոշ տվյալներ ճշտելու ուղղությամբ:

Իհարկե, այս բոլոր հարցերը կարոտ են լուրջ մասնագիտական քննության, որ ներկա հրապարակման նպատակը չէ:

А. А. КАЛАНТАРЯН

КОЛОКОЛА ТАТЕВСКОГО МОНАСТЫРЯ И ИХ НАДПИСИ

Резюме

В 1969 г. при чистке-раскопках Татевского монастыря, на полу трехэтажной колокольной, разрушенной землетрясением 1931 г., были обнаружены два колокола с надписями, датируемыми 1302 и 1304 годами.

²² Ալիշան, Լալայան, Կոստանյանց, Բարխուդարյան՝ ԶԶԱՅՆ ՅՆԾՈՒԹԵԱՆ, Փափազյանց, Տեր-Մովսիսյան՝ ԶՅՆԾՈՒԹԻԻՆ ԵՒ ԶՈՒՐԱԽՈՒԹԻԻՆ:

²³ Փափազյանց՝ ՅՆԾԱՍՅԷ:

²⁴ Նախորդ հրատարակիչներից և ոչ մեկը չի ընթերցել արձանագրության այս բառը: Ալիշանը ուղղակի գրել է «տառ», որը կրկնել է Կոստանյանցը, իսկ Բարխուդարյանը ավելացրել է տ ա ռ [ա պ ե ա լ], ըստ երևույթին հիմք ունենալով Սաղմոսը: «ՏԿԱՐ» ընթերցումը մեզ առաջարկել է Ս. Ավագյանը. «Տ» տառի ստորին ստեղծ փորագրող վարպետի կողմից բաց է թողնվել կաղապարի վրա:

²⁵ Լալայանի մոտ բացակայում է երկրորդ զանգի առաջին արձանագրությունը:

²⁶ Փափազյանցի և Տեր-Մովսիսյանի մոտ՝ ՉԾԳ:

²⁷ Բոլոր հրատարակիչների մոտ՝ ՊԱՀԷ:

²⁸ Փափազյանցի մոտ բացակայում է երկրորդ զանգի երկրորդ արձանագրությունը: